



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ 15.03.2019Թ. ԹԻՎ 5/13-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեծլումյանի և Կարեն Սարգսյանի,

հաշվի առնելով կորոնավիրուսով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ստեղծված իրավիճակը,

նկատի ունենալով 2020 թվականի գարնանը որակավորման քննություններ կազմակերպելու, ուստի և Պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգում (**այսուհետ՝ Կարգ**) փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությունը,

դեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 45.11-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 9-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 16.5 կետի 34-րդ ենթակետի և 18.6 կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարգի 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Հանձնաժողովի նիստը կարող է անցկացվել առկա ձևաչափի առցանց եղանակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ հեռահաղորդակցության միջոցներով՝ Հանձնաժողովի անդամների անմիջական մասնակցությամբ:»:

08 ապրիլի 2020թ.

թիվ 7/6-Լ

2. Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 142-րդ կետով.

«142. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության, ռազմական դրության, համաճարակի կամ այլ պատճառով անձանց տեղաշարժի կամ անմիջական շփումների սահմանափակումների դեպքերում, երբ հնարավոր չէ կազմակերպել որակավորման քննությունը սույն կարգին համապատասխան, որակավորման քննությունը կազմակերպվում և անցկացվում է սույն կարգի հավելվածը հանդիսացող «Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ով:»:

3. Որպես Պալատի խորհրդի 15.03.2019թ. թիվ 5/13-Լ որոշմամբ հաստատված Որակավորման քննության ընդունման և հանձնման կարգի հավելված հաստատել **«Արտակարգ դեպքերում որակավորման քննության ընդունման և հանձնման կարգ»-ը՝** համաձայն հավելվածի:

4. 2020 թվականի գարնան որակավորման քննությունները կազմակերպել Կարգի հավելվածին համապատասխան:

5. Հանձնարարել Պալատի խորհրդի քարտուղարին սույն որոշումը հրապարակել Պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

08 ապրիլի 2020թ.
թիվ 7/6-Լ
ք. Երևան